ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 – ը օգոստոսի 2014թ. թիվ 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ՍԵՎՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ-3962-01 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ,,ժբ'' ենթակետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ,,Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2014թ. հունիսի 12-ի թիվ 2 գրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Թույլատրել ,,Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա'' փակ բաժնետիրական ընկերությանը աճուրդային կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող ՈՒԱԶ-3962-01 մակնիշի 0076 ԱԴՍ պետհամարանիշով /16.04.2002թ. հանձնվել է Իջևանի հաշվառման քննչական բաժանմունք/ ավտոմեքենան:
2. ,,Սևքարի գյուղական բժշկական ամբուլատորիա'' փակ բաժնետիրական ընկերության աճուրդի ներկայացված ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենայի մեկնարկային գինը սահմանել 2014թ. հուլիսի 17-ի դրությամբ գնահատված շուկայական արժեքը /հիմքը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2014թ.օգոստոսի 11-ի թիվ 01/22.13/4348-14 գրությունը/՝ 150 000 դրամ:
3. Տրանսպորտային միջոցը չվաճառվելու դեպքում կազմակերպել նոր աճուրդներ, մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցնելով նախորդ աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի քան գնահատված արժեքի 20 տոկոսը:
4. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ԿԱ պետական գույքի կառվարման վարչության ,,Աճուրդի կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:
5. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2014թ. օգոստոսի 15
Ք. Իջևան